



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<24>> ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019 թվականի N 47

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 12 ՇԵՆՔ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻՑ ՍԵՆՅԱԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ և 35-րդ հոդվածի 16-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Անդրանիկ Օհանյանի դիմումը՝ իրեն սենյակ հատկացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ քաղաքացի Անդրանիկ Գրիշայի Օհանյանը չունի բնակարան, առողջական խնդիրների պատճառով չունի մշտական աշխատանք և հանդիսանում է հիվանդության թոշակառու

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ






ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արարատ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ք. Արարատ, Աբովյան փողոց 12 շենք հասցեում գտնվող հանրակացարանի 3-րդ հարկում գտնվող, 11,0 քմ մակերեսով, թիվ 83 ազատ սենյակը հատկացնել քաղաքացի Անդրանիկ Գրիշայի Օհանյանին՝ օգտագործման իրավունքով, առանց վարձավճարի, 2 տարի ժամկետով:
2. Անշարժ գույքի պահպանման, շահագործման և վերանորոգման բոլոր պարտականությունները դնել օգտագործողի վրա:
3. Օգտագործման ժամկետն ավարտվելու կամ վաղաժամկետ դադարելու դեպքում, ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ քաղաքացին համայնքի ղեկավարին պարտավոր է տեղեկացնել սենյակի նախատեսվող ազատման մասին և սենյակը բարեկարգ վիճակում հանձնել սեփականատիրոջը՝ բացառությամբ բաժանելի բարեկավումների:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈՒԲՅԱՆ
2. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3. ԱՐՄԵՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ
4. ԳԵՂԱՄ ԳԵՂԱՍՅԱՆ
5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ


[Handwritten signature]

7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

[Handwritten signature]

8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

[Handwritten signature]



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԳԱՆ

ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<24>> ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019 թվականի N 48

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՐՈՎՅԱՆ 12 ՇԵՆՔ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻՑ ՍԵՆՅԱԿ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ և 35-րդ հոդվածի 16-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Անուշ Նվերի Այվազյանի դիմումը՝ իրեն սենյակ հատկացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ քաղաքացին իր չորս անչափահաս երեխաների հետ բնակվում է Աբովյան փողոց 12 շենք հասցեում գտնվող հանրակացարանի մեկ սենյակում, կենցաղային ծանր պայմաններում և պատրաստվում է ունենալ հինգերորդ երեխան

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արարատ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ք. Արարատ, Աբովյան փողոց 12 շենք հասցեում գտնվող հանրակացարանի 3-րդ հարկում գտնվող, 16,9 քմ մակերեսով, թիվ 71 ազատ սենյակը հատկացնել քաղաքացի Անուշ Նվերի Այվազյանի ընտանիքին՝ օգտագործման իրավունքով, առանց վարձավճարի, 2 տարի ժամկետով, առանց սեփականաշնորհման (սեփականության իրավունքի փոխանցման) իրավունքի
2. Անշարժ գույքի պահպանման, շահագործման և վերանորոգման բոլոր պարտականությունները դնել օգտագործողի վրա:
3. Օգտագործման ժամկետն ավարտվելու կամ վաղաժամկետ դադարելու դեպքում, ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ քաղաքացին համայնքի ղեկավարին պարտավոր է տեղեկացնել սենյակի նախատեսվող ազատման մասին և սենյակը բարեկարգ վիճակում հանձնել սեփականատիրոջը՝ բացառությամբ բաժանելի բարելավումների:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈՒԲՅԱՆ

2. ԱԼԵԲՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

3. ԱՐՄԵՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ

4. ԳԵՂԱՍ ԳԵՂԱՍՅԱՆ

5. ԳՈՂՆԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Handwritten signature

6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Handwritten signature

7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Handwritten signature

8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Handwritten signature

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՇԱԿԱՆ



ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

Handwritten signature



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<24>> ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019 թվականի N 45

**ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու նիստի օրակարգը.

1. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ ֆինտևոս և գանձումների բաժնի պետ Հ. Պողոսյանը/

2. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 12 ՇԵՆՔ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻՑ ՍԵՆՅԱԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխ. մասնագետ Հ. Դավթյանը/

3. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 12 ՇԵՆՔ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻՑ ՍԵՆՅԱԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխ. մասնագետ Հ. Դավթյանը/

4. ՔԱՂԱՔԱՅԻ ՎԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՍԸ՝ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխ. մասնագետ Հ. Դավթյանը/

5. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՈՒՍԵԼՆ ԱՊԱՍՈՆՏԱԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ









/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/


6. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՄԱՅԻՍ ՍԵՀՐԱԲՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյանը/

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

- 1. ԱԶՍ ՀԱԿՈՒԲՅԱՆ 
- 2. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ 
- 3. ԱՐՄԵՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ 
- 4. ԳԵՂԱՄ ԳԵՂԱՍՅԱՆ 
- 5. ԳՈՂԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 
- 6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 
- 7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ 
- 8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ 





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<24>> ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019 թվականի N 46-Ն

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով՝ մինչև տարեվերջ համայնքապետարանի էլեկտրաէներգիայի և ջրի վճարները լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունից, օբյեկտների պետական գրանցման համար ծառայության վճարների լացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունից, «Արարատ քաղաքի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի էլեկտրաէներգիայի վճարի լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունից, Արարատ քաղաքի Չարենցի փողոցի միջնամասում գյուղմթերքների առևտրի համար նախատեսված վայր կառուցելու նպատակով, ՈԿՖ բանավանի առաջին խաչմերուկի ձախակողմյան հատվածում կանգառի կառուցման նպատակով շինանյութերի ձեռքբերման անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 8-րդ ենթակետերի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Պակասեցնել 0641.51 «Փողոցների լուսավորություն» ծրագրի 4212 «Էներգետիկ ծառայություններ» հոդվածը 300,0 հազ.դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 9.700,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը սահմանել 13,600.0 հազ. դրամ:
2. Ավելացնել 0111.51 «Պետկառավարում» ծրագրի ա/ 4212 «Էներգետիկ ծառայություններ» հոդվածը 200,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային և ծրագրային պլանը 2000,0 հազ. դրամ, բ/ 4213 «Գոմունալ ծառայություններ» հոդվածը 100,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 400,0 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ծախսային պլանը 85.332,0 հազ. դրամ:
3. Պակասեցնել 1112.51 «Համայնքի պահուստային ֆոնդեր» ծրագրի 4891 «Պահուստային ֆոնդեր» հոդվածը 1110,0 հազ. դրամ՝ սահմանելով համայնքի պահուստային ֆոնդը 2.497,2 հազ. դրամ:
4. Ավելացնել 0823.51 «Մշակութային տներ, ակումբներ» ծրագրի 4639 «Դրամաշնորհներ համայնքի ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածը 300,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային և ծրագրային պլանը 28. 717,0 հազ. դրամ:
5. Ավելացնել 0161.52 «Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում» ծրագրի 4823 «Պարտադիր վճարներ» հոդվածը 200,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 800,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը սահմանել 850,0 հազ. դրամ:
6. Ավելացնել 0666.1 «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» ծրագրի


ա/ 4251 «Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում» հողվածք 610,0 հազ. դրամ:
Սահմանել վերջինիս ծախսային պլանը 6.510,0 հազ. դրամ, իսկ ծրագրային պլանը
սահմանել 136.722,0 հազ. դրամ:

7. Համայնքի ղեկավարին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույցեր


ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝


1. ԱԶԱՏ ՀԱԿՈՒԲՅԱՆ



2. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



3. ԱՐՄԵՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ




4. ԳԵՂԱՄ ԳԵՂԱՍՅԱՆ



5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ



8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<24>> ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019 թվականի N 49

**ՔԱՂԱՔԱՅԻ ՎԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՍԸ՝ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Վասպուրակ Պետրոսյանը ք. Արարատ, Խանջյան 66/1-2՝ հասցեում / ծածկագիր 03-002-0002-0092/ ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող 0,00372 հա մակերեսով հողատարածք և վրան կառուցված առևտրի սրահ: Նշված շինությանը կից ետնամասի ճակատին զուգահեռ առկա է ազատ տարածք, որը չի օգտագործվում այլ անձանց կողմից:

Քաղաքացի Վասպուրակ Պետրոսյանը դիմել է համայնքապետարան՝ նշված տարածքը սեփականության իրավունքով, առևտրի սրահի ընդլայնման նպատակով, հողատարածքի կադաստրային արժեքով իրեն օտարելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 08.05.2003թ. թիվ 714-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջներով, և նկատի ունենալով, որ Խանջյան 66/1-2՝ հասցեում գտնվող, 03-002-0002-0092 ծածկագիրը կրող, քաղաքացի Վասպուրակ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող առևտրի սրահին հարակից ազատ տարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև հնարավոր չէ հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով:

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Բավարարել Վասպուրակ Վարուժանի Պետրոսյանի խնդրանքը և Խանջյան փողոց 66/1-2՝ հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող առևտրի սրահին և զբաղեցրած 0,00372 հա մակերեսով հողատարածքին հարակից 0,00335 հա մակերեսով ազատ հողատարածքը՝ ընդլայնման նպատակով, սեփականության իրավունքով, հողի կադաստրային արժեքի 100%-ի չափ վճարով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրան՝ Վասպուրակ Վարուժանի Պետրոսյանին:

2. Պարտավորեցնել քաղաքացուն՝ տարածքում շինարարական աշխատանքները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և քաղաքաշինական գործող նորմերով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<24>> ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019 թվականի N 50

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՈՒՄԵԼՆ ԱՊԱՍՈՆՏԱԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դեռևս 1982թ. Արարատ քաղաքում երեխաների ատրակցիոն խաղերի համար կառուցված կարուսելը շուրջ 10-12 տարի է չի գործում, որի հետևանքով անձրևներից և խոնավությունից քայքայվել են և ենթարկվել են կոռոզիայի կարուսելի մետաղական սարքավորումները, որը նաև իրենից վտանգավորություն է ներկայացնում երեխաների համար, որոնք ամեն օր բարձրանում են վերջինիս վրա և ստեղծում նման իրավիճակներ, ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ









ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող քաղաքային կարուսելն ապամոնտաժելու համար:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

- 1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
- 2. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
- 3. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
- 4. ԳԵՂԱՄ ԳԵՂԱՄՅԱՆ
- 5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
- 6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
- 7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱԿՅԱՆ
- 8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՂԱՎԱՐ՝  ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<24>> ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019 թվականի N 51

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՄԱՅԻՄ ՄԵՀՐԱԲՅԱՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Արարատ քաղաքային համայնքի ավագանու անդամ Մայիս Մեհրաբյանի Արարատ քաղաքային համայնքի ավագանու նիստերի կեսից ավելին չմասնակցելու հանգամանքները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետերով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.









ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ


ՈՐՈՇՈՒՄ Է՝

Վաղաժամկետ դադարեցնել Արարատ քաղաքային համայնքի ավագանու անդամ՝ Մայիս Մեհրաբյանի լիազորությունները:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

- 1. ԱԶՍ ՀԱԿՈԲՅԱՆ 
- 2. ԱԼԵՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ 
- 3. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ 
- 4. ԳԵՂԱՄ ԳԵՂԱՄՅԱՆ 
- 5. ԳՈՀԱՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 
- 6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 
- 7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆՉԱՆՅԱՆ 
- 8. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ 



ՄԱՅԻՄ ՄԵՀՐԱԲՅԱՆ
ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ